



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Ապրիլ 2006

Ներկայացվում են 2006 թվականի ապրիլի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները. ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-փետրվար ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ մարտին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			հունվար-փետրվարի ցուցանիշներ			
Իրական հատված							
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	874.4	1,106.7	1,513.7	60.4	74.9	100.3	113.2
ՀՆԱ-ի իրական աճ (%)	14.0	10.1	13.9	7.5	7.4	7.0	7.0
Արդյունաբերության աճ (%)	15.6	2.1	7.4	7.9	-5.5	4.3	-1.1
Գյուղատնտեսության աճ (%)	4.2	14.5	11.2	6.4	5.8	0.9	2.7
Շինարարության աճ (%)	45.5	13.4	35.1	18.1	8.3	14.7	13.3
Տրանսպորտ և կապի աճ (%)	8.2	16.9	13.2	13.7	10.8	9.5	12.9
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	14.1	10.5	9.6	10.4	9.5	5.4	7.8
Ծառայությունների աճ (%)	8.6	12.1	10.4	7.1	8.2	12.5	12.3
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	4.6	6.0	3.1	3.4	11.9	6.8	-1.3
Սպառողական գների ինդեքս (d/2 միջին, %)	4.7	7.0	0.6	3.4	7.4	4.8	-1.5
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)							
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	212.2	250.1	304.3	22.5	32.8	41.3	47.3
Ծախսեր (մլրդ դրամ)	242.0	295.9	395.2	24.3	31.9	38.1	48.1
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	-8.1	-2.0	22.2	-2.4	-4.4	-13.7	-7.0
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.1	13.2	13.7	19.9	24.1	26.5	28.8
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	14.9	15.6	17.7	21.4	23.4	24.5	29.3
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.5	0.1	1.0	2.1	3.2	8.8	4.3
Արտաքին հատված							
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	685.6	722.9	950.4	85.5	84.8	108.8	113.4
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	1,279.5	1,350.7	1,767.9	168.5	173.7	237.9	251.1
Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-593.9	-627.8	-817.6	-83.0	-89.0	-129.1	-137.7
Արտահանման աճ (%)	35.7	5.4	31.5	11.1	-0.9	28.4	4.2
Ներմուծման աճ (%)	29.6	5.6	30.9	27.1	3.1	36.9	5.6
Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	21.2	17.7	16.8	42.8	37.0	40.0	37.8
Դրամավարկային հատված							
Փողի զանգված (d/2 վերջ, մլրդ դրամ)	233.8	285.9	365.6	185.4	221.9	268.4	352.7
ՀՀ ԿԲ շուտ արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	157.8	149.3	237.6	123.6	148.2	165.3	212.7
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.9	6.6	6.1	0.6	0.6	0.6	0.5
Փողի բազմարկիչ	2.05	2.18	1.85	1.85	2.13	2.28	1.87

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաներ

	2002	2003	2004	2005	Հ	Փ	Մ
	տարեկան ցուցանիշներ				2006-ի ամսական ցուցանիշներ		
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)							
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	-	4.9	4.1	4.3
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	-	-	4.9	4.9
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0	15.0
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	17.3	16.9	17.1	16.5
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	6.5	6.4	5.9	5.2
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	-14.2	0.5	-0.3	0.2
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (d/2 վերջ)	584.9	566.0	485.8	450.2	449.2	450.7	450.9
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (d/2 վերջ)	606.9	702.2	661.1	532.4	542.7	534.2	545.4
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (d/2 վերջ)	18.3	19.2	17.5	15.6	16.0	16.0	16.2
Սպառողական գների ինդեքս (d/2 վերջ, %)	2.0	8.6	2.0	-0.2	3.6	0.2	0.4
Պարենային ապրանքներ*	1.9	12.4	2.8	-1.2	5.2	0.2	0.5
Ոչ պարենային ապրանքներ	2.7	0.4	0.0	2.1	0.0	0.1	0.5
Ծառայություններ	1.5	2.1	0.5	1.9	0.1	0.3	0.0

* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Հիմնական միտումները

Իրական հատված

2006 թվականի հունվար-փետրվարին, ինչպես և անցած տարի, տնտեսական աճը կազմեց 7.0 տոկոս: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2005-ի հունվար-փետրվարի համեմատ ավելացավ 13 ԱՄՆ դոլարով և կազմեց 113 ԱՄՆ դոլար: Այնուամենայնիվ, նշված հավելածը հիմնականում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման արդյունք էր, որի բացառման դեպքում այն կկազմեր մոտ 5.5 ԱՄՆ դոլար:

Տնտեսական աճի 2.5 տոկոսային կետը ձևավորվեց ապրանքների զուտ հարկերից մուտքերի՝ 14.8 տոկոսով աճի արդյունքում: Տնտեսության հիմնական ճյուղերից աճին առավել նպաստեցին ծառայությունների և առևտրի ճյուղերը, համապատասխանաբար, 1.8 և 1.2 տոկոսային կետերով: Աճի առավել բարձր տեմպերով աչքի ընկան շինարարության, տրանսպորտի (և կապի) և ծառայությունների ճյուղերը՝ 13.3, 12.9 և 12.3 տոկոսով համապատասխանաբար: Նախորդ տարվա համեմատ 1.1 տոկոսով կրճատվեց արդյունաբերության ճյուղի համախառն ավելացված արժեքը:

Բյուջետային հատված

ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների համաձայն 2006 թվականի առաջին երկու ամիսներին պետբյուջեի ծախսերի աճը մոտ 4 անգամ առաջանցիկ էր եկամուտների նկատմամբ: Այնուամենայնիվ, ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտները 4.3 տոկոսային կետով գերազանցեցին ծախսերի մակարդակը, որի արդյունքում ձևավորվեց 7 միլիարդ դրամի հավելուրդ:

Եկամուտների 6.5 տոկոսով աճը հիմնականում պայմանավորված էր կապիտալ գործառնություններից, շահութահարկից և եկամտահարկից ստացվող մուտքերի բարձր աճերով, համապատասխանաբար, 5 անգամ, 51.8 և 53.1 տոկոսով: Բյուջեի եկամուտների աճի վրա առավել բացասաբար անդրադարձավ ոչ հարկային եկամուտների անկումը. թեև փետրվարին այդ հարկատեսակից մուտքերը մոտ 2.3 անգամ գերազանցեցին նախորդ տարվա նույն ցուցանիշը, այնուամենայնիվ, հունվար-փետրվարի կուտակային ցուցանիշը 3 անգամ զիջեց նախորդ տարվա նույն ցուցանիշին՝ զսպելով բյուջեի եկամուտների աճը 10.7 տոկոսային կետով:

Չնայած հարկային եկամուտների գերակշիռ մասը ձևավորվում է տնտեսության անուղղակի հարկումից, այնուամենայնիվ 2006-ի հունվար-փետրվարի արդյունքներով հարկային եկամուտների 14.5 տոկոսով աճը մեծամասամբ շահութահարկի և եկամտահարկի գծով մուտքերի ավելացման արդյունք էր, ընդ որում եկամտահարկից հավելածը հավասարվել էր ԱԱՀ-ից և ակցիզային հարկից մուտքերի գումարային հավելածին:

2006 թվականի հունվար-փետրվարին պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունը կազմել են հատկացումները պաշտպանության, սոցիալական, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտների ծրագրերին: Հատկացումների առավել մեծ աճը՝ տրանսպորտ (ճանապարհային տնտեսություն և կապ) խմբին և առողջապահություն ոլորտին ուղղված միջոցների գծով էր, համապատասխանաբար, 10.3 և 2 անգամ:

2005-ի հունվար-փետրվարի համեմատ 30.7 տոկոսով ավելացել են ապրանքների և ծառայությունների գնումները, 35.5 տոկոսով՝ ընթացիկ տրանսֆերտները: Վերջիններիս կազմում մոտ կրկնակի ավելացել է նպաստների և կրթաթոշակների ֆինանսավորումը, իսկ կենսաթոշակներինը՝ կրճատվել 27 տոկոսով: Բյուջեի ծախսերի կառուցվածքում նկատելի տեղաշարժերից են կապիտալ ծախսերի կշռի ավելացումը՝ 2.4 տոկոսային կետով և սուբսիդիաների կշռի նվազումը՝ 4.4 տոկոսային կետով:

Արտաքին առևտուր

2006 թվականի հունվար-փետրվարին ներմուծման աճը 1.3 տոկոսային կետով առաջանցիկ էր արտահանման աճից: Միևնույն ժամանակ և՛ արտահանման, և՛ ներմուծման կշիռները ՀՆԱ-ի նկատմամբ կրճատվեցին, համապատասխանաբար, 2.6 և 4.9 տոկոսային կետերով, որի արդյունքում կրճատվեց նաև առևտրային հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ՝ կազմելով 37.8 տոկոս: Ընդհանուր առմամբ 2006-ի առաջին երկու ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը խորացավ 6.7 տոկոսով:

2006-ի հունվար-փետրվարին արտահանման 4.2 տոկոսով աճը հիմնականում արդյունք էր հանքահումքային արտադրանքի և պատրաստի սննդի արտադրանքի գծով ծավալների, համապատասխանաբար,

23.9 և 79.6 տոկոսով ավելացման: Ներմուծման 5.6 տոկոսով աճը դարձյալ պայմանավորված էր հանքահումքային արտադրանքի, ինչպես նաև տրանսպորտի միջոցների (վերագետնյա, օդային և ջրային), համապատասխանաբար, 12.4 և 26.5 տոկոսով: Հայաստանի արտաքին առևտրի կառուցվածքում մեծ կշիռ ունեցող թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի (թանկարժեք մետաղների և դրանցից իրերի) ապրանքախմբի գծով և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների կրճատումը, համապատասխանաբար, 16.4 և 28.6 տոկոսով, գսպեց ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման աճը, համապատասխանաբար, 6.6 և 7.7 տոկոսային կետերով:

Հունվար-փետրվարին մարդասիրական օգնության կարգով Հայաստան ներմուծվեց 4.6 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով՝ 1,594.9 տոննա ապրանք, որոնց հիմնական մասը կազմեցին թուրջը և թղթից իրերը՝ 25.5 տոկոս, ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը՝ 19.6 տոկոս: Արժեքային արտահայտությամբ աճի առավել բարձր տեմպերով դարձյալ առանձնացել է թղթի (և թղթից իրերի), ինչպես նաև բուսական ծագման արտադրանքի ներմուծումը՝ 648 և 65 անգամ:

Դրամավարկային հատված

Ըստ ՀՀ ԿԲ նախնական տվյալների փողի զանգվածը 2006-ի փետրվարի վերջին՝ հունվարի վերջի համեմատ նվազել է 1.9 միլիարդ դրամով, որը հիմնականում բացատրվում է արտարժույթով ավանդների 3.6 միլիարդ դրամով կրճատմամբ: Միևնույն ժամանակ աճել են ինչպես բանկային համակարգից դուրս կանխիկը՝ 0.3 միլիարդ դրամով, այնպես էլ դրամով ավանդները՝ 1.3 միլիարդ դրամով:

2005-ի փետրվարի համեմատ փողի զանգվածն աճեց 31.4 տոկոսով՝ ուղղեկցվելով դրամական բազմարկչի 1.2 անգամ կրճատմամբ (2006-ի փետրվարին այն կազմել է 1.87՝ 2005-ի փետրվարի 2.21-ի դիմաց): Վերջինս դիտարկվող ժամանակահատվածում փողի բազայի 60.1 տոկոսով աճի արդյունք էր:

Արտարժույթային փոխարժեքներ

2006 թվականի մարտի ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքն եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ, ընդհանուր առմամբ, դրսևորեց արժեզրկման վարքագիծ: Ինչ վերաբերում է ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքին, ապա մարտի առաջին երկու շաբաթներին այն արժեզրկվել է, այնուհետև մեկ շաբաթ տևած արժեվորմանը դարձյալ հաջորդել է արժեզրկումը: Մարտի ընթացքում ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու փոխարժեքների առավելագույն մակարդակները կազմել են, համապատասխանաբար, 453.2, 540.1 և 16.2 դրամ:

Մարտի վերջին՝ 2005-ի դեկտեմբերի վերջի համեմատ դրամի փոխարժեքն արժեզրկվեց, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 0.7 դրամով, եվրոյի՝ 13.1 դրամով, ռուսական ռուբլու՝ 0.6 դրամով:

Սպառողական շուկա

2006 թվականի մարտին փետրվարի համեմատ սպառողական շուկայում տեղի ունեցավ 0.4 տոկոս գնաճ, ընդ որում պարենային և ոչ պարենային ապրանքների գներն աճեցին 0.5 տոկոսով, իսկ ծառայությունների գները մնացին անփոփոխ:

Պարենային ապրանքների կազմում փետրվարի համեմատ առավել թանկացան ձկնամթերքը՝ 21.2 տոկոսով և շաքարավազը՝ 7.2 տոկոսով: Միևնույն ժամանակ 5.6 տոկոսով իջել են ձվի և 1.9 տոկոսով՝ բանջարեղենի և կարտոֆիլի գները:

Ոչ պարենային ապրանքների կազմում առավել նկատելի էր ոսկերչական իրերի՝ 5.2 տոկոսով և լվացող միջոցների 2.7 տոկոսով թանկացումը:

Ծառայությունների կազմում 2.2 տոկոսով թանկացան հեռախոսի (հեռագրի), 1.3 տոկոսով՝ հանգստի կազմակերպման ծառայությունները: Միևնույն ժամանակ 3.4 տոկոսով իջել են մշակույթի և 1.7 տոկոսով՝ բուժապասարկման ծառայությունների գները:

Արդյունքում 2006-ի մարտին՝ 2005-ի դեկտեմբերի համեմատ սպառողական գների աճը կազմել է 4.2 տոկոս, իսկ 2006-ի հունվար-մարտին սպառողական գների միջին մակարդակը նվազել է 2005-ի նույն ժամանակահատվածի համեմատ 0.9 տոկոսով:

2006 թվականի հունվար-փետրվարին ՀՆԱ-ի ղեֆլյատորը կազմեց -1.3 տոկոս: Դեֆլյատորի բացասական լինելն ընդհանուր առմամբ վկայում է ՀՆԱ-ի կազմում ընդգրկված վերջնական ապրանքների և ծառայությունների գների, 2005-ի հունվար-փետրվարի համեմատ, իջեցման մասին:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			հունվար-փետրվարի ցուցանիշներ			
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	250.1	297.9	372.9	26.7	36.3	51.8	55.1
Ընդամենը եկամուտներ	240.2	288.2	363.1	26.7	36.3	51.8	54.7
Ընթացիկ եկամուտներ	237.0	279.1	350.7	25.3	36.2	51.6	52.2
Հարկային եկամուտներ, այդ թվում	212.2	250.1	304.3	22.5	32.8	41.3	47.3
Ավելացված արժեքի հարկ	107.8	117.9	146.8	12.1	17.0	21.3	22.1
Շահութահարկ	17.6	32.0	46.6	1.8	2.5	4.1	6.2
Եկամտահարկ	16.8	20.4	26.6	1.8	2.5	3.3	5.1
Ակցիզային հարկ	39.1	40.7	38.6	3.6	6.1	5.5	6.5
Պետական տուրք	15.2	16.9	17.3	1.2	1.9	1.9	2.1
Ոչ հարկային եկամուտներ	9.5	12.0	29.2	1.5	1.4	8.4	2.9
Կապիտալ եկամուտներ	3.2	9.1	12.4	1.4	0.2	0.2	2.5
Պաշտոնական տրանսֆերտներ	9.9	9.7	9.8	-	-	-	0.4
Պետբյուջեի ծախսեր	242.0	295.9	395.2	24.3	31.9	38.1	48.1
Պաշտպանություն	44.3	52.5	64.4	4.5	4.1	7.4	9.2
Հասարակական կարգի պահպանություն	19.9	23.2	33.3	2.2	1.6	3.2	3.8
Կրթություն և գիտություն	32.9	45.2	58.8	3.2	3.4	4.7	6.4
Առողջապահություն	18.9	24.3	30.4	2.0	2.8	2.0	3.9
Սոց. ապահովագրություն և ապահովություն	29.3	35.3	44.1	4.1	2.8	6.6	7.5
Ընթացիկ ծախսեր	214.5	252.8	310.1	22.8	30.2	34.1	42.2
Աշխատավարձ	13.9	24.3	33.2	0.9	2.9	3.5	4.4
Տոկոսավճարներ	11.3	9.8	9.9	1.3	1.2	1.2	1.1
Սուբսիդիաներ	15.1	18.4	16.5	1.9	2.6	3.0	1.7
Ընթացիկ տրանսֆերտներ	43.9	60.1	76.6	5.9	5.9	9.5	12.9
Ապրանքներ և ծառայություններ	130.3	140.1	173.8	12.9	17.7	16.9	22.1
Կապիտալ ծախսեր	21.6	32.7	71.9	0.6	0.4	2.0	3.7
Վարկավորում հանած մարում	5.8	10.5	13.2	0.9	1.3	2.0	2.3
Դեֆիցիտի ֆինանսավորում	-8.1	-2.0	22.2	-2.4	-4.4	-13.7	-7.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			հունվար-փետրվարի ցուցանիշներ			
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.1	13.2	13.7	19.9	24.1	26.5	28.8
Ավելացված արժեքի հարկ	6.6	6.2	6.6	10.7	12.5	13.7	13.5
Շահութահարկ	1.1	1.7	2.1	1.6	1.8	2.6	3.8
Եկամտահարկ	1.0	1.1	1.2	1.6	1.8	2.1	3.1
Ակցիզային հարկ	2.4	2.1	1.7	3.2	4.5	3.5	3.9
Պաշտոնական տրանսֆերտներ	0.6	0.5	0.4	-	-	-	0.2
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	14.9	15.6	17.7	21.4	15.3	24.5	29.3
Պաշտպանություն	2.7	2.8	2.9	4.0	3.0	4.7	5.6
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.5	2.0	1.2	2.1	2.3
Կրթություն և գիտություն	2.0	2.4	2.6	2.8	2.5	3.0	3.9
Առողջապահություն	1.2	1.3	1.4	1.8	2.1	1.3	2.3
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.9	2.0	3.6	2.0	4.2	4.6
Դեֆիցիտի ֆինանսավորում	0.5	0.1	1.0	2.1	3.2	8.8	4.3

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, S23 կենտրոնի հաշվարկներ: